

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА**

Երկրաբանություն և աշխարհագրություն 1, 2014

Геология и география

Աշխարհագրություն

УДК 574.5

**ՔԱՂԱՔԱԾԻՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ԽՈՇՈՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ,
ԹԳՆԱԺԱՍՏՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ**

Մ. Գ. ՄԱՆԱՍՅԱՆ*, Մ. ՄԱՆԻ

ԵՊՀ սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոն, Հայաստան

Աշխատանքում քննարկված են ճգնաժամային իրավիճակների կառավարման քաղաքաշինական հիմնախսարցերը, որոնք առաջանում են քնական աղետների, մասնավորապես, երկրաշարժների հետևանքով: Վեր են հանված քնական աղետների հետևանքների մասշտարքների վրա ազդող աշխարհագրական և քաղաքաշինական հիմնախսարցները:

Առաջարկված են ճգնաժամային իրավիճակներում քաղաքաշինական կառավարման բարեկավմանն ուղղված միջոցառումներ, որոնք էլ հնարավորին չափով կարող են նվազեցնել քնական աղետների հետևանքները:

Keywords: natural disasters, geographical factors, regional management.

Ներածություն: Խոշոր քաղաքները քաղաքաշինական նախագծման և տարածքային կառավարման բավականին բարդ օրինակություն են, որանք ինքնակարգավորվող և ինքնազարգացող սոցիալ-տնտեսական համակարգեր են, որոնց զարգացումը պայմանավորված է ինչպես ներքին գործուներով և մեխանիզմներով, այնպես էլ արտաքին միջավայրով: Քաղաքի՝ որպես տարածական համակարգի տնտեսական, սոցիալական, քաղաքաշինական և էկոլոգիական ենթահամակարգերը և կառուցվածքային քաղաքիչները միմյանց հետ գտնվում են սերտ փոխկապակցվածության մեջ՝ ապահովելով քաղաքի ներքին ամբողջականությունը և քաղմագրութառության բնույթը [1, 2]:

Քաղաքների հատակագծման և տարածքային կառուցվածքի ձևավորման և վերլուծության աշխատանքներին մասնակցում են տարրեր քնազավառների մասնագետներ, որոնց թվում՝ քաղաքաշինարարներ և աշխարհագետներ, այս գործներացի հիմքում ընկած է մարդու և միջավայրի միջև ներդաշնակ հարաբերությունների ձևավորումը: Ուստինասիրվում են քաղաքաշինության հիմնահարցերը և, նկատի առնելով տվյալ քաղաքի քնակչության կազմը, տարաբնակեցումը, տարածամամակային գործունեությունը և տարրեր մասնագետների (ճարտարապետներ, սոցիոլոգներ, աշխարհագետներ, տնտեսագետներ և այլն) սերտ համագործակցությամբ մշակվում են քաղաքի հատակագծման սկզբունքները և հիմնական գծերը: Այս համագործակցության անհրաժեշտությունը

* E-mail: mmman@rambler.ru

հատկապես կարևորվում է այն խոչը քաղաքների քաղաքաշինական և այլ քննությի խնդիրների լուծման ժամանակ, որոնք գտնվում են երկրաշարժավտանց գոտիներում և պահանջում են ոչ ստանդարտ լուծումներ: Քաղաքի հատակագիծը պետք է առավելագույնս հաշվի առնի պարբերաբար կրկնվող ավերիչ երկրաշարժերի հանգամանքը և ստեղծի համապատասխան պայմաններ՝ դրանց ժամանակ առաջացած ճգնաժամային իրավիճակներում արագ արձագանքման և բնակչության օգնության կազմակերպման համար: Դրանցից են՝ 1) անվտանգության ապահովման նպատակով համապատասխան ծրագրերի ներկայացումը; 2) քաղաքի ճիշտ և հավասարակշռված տարածքային քաժանումը՝ նկատի առնելով տրանսպորտային ցանցի գծագրությունը; 3) սոցիալական և արտադրական համապատասխան ենթակառուցվածքների առկայությունը; 4) էկոլոգիական բավարար իրավիճակի ապահովումը [3]:

Անհրաժեշտ է նշել, որ ինչպես ամբողջ Իրանում, այնպես էլ Գուլիստան նահանգում, ուրբանիզացման բարձր տեմպերը քաղաքներում հանգեցրել են աշխատանքի, բնակարանների, սպասարկման ոլորտի նկատմամբ պահանջարկի բարձրացմանը, ինչպես նաև միջավայրի աղտոտվածության և սովոր աճին: Դրանք բնակչության արագ աճի, արդյունաբերության զարգացման և բնական ռեսուրսների շուայլ օգտագործման հետևանքներն են, որոնք խոչը քաղաքների զարգացման համար քաղաքաշինական, սոցիալ-տնտեսական և էկոլոգիական բնույթի բազմաթիվ խնդիրներ են առաջացրել:

Խոչը քաղաքներում առավել հաճախ կրկնվող աղետներն են՝ երկրաշարժերը, հրդեհները, փոթորիկները, ջրհեղեղները, սովը, շոգը, համաճարակները, ջրի, գազի և էլեկտրաներօխայի երկարատև անշատումները, պայրյունները (քիմիական, միջուկային և այլն), զինված բախումները և այլն: Հետևաբար, խիստ հրատապ խնդիր է դառնում խոչը քաղաքների ճգնաժամային իրավիճակների կառավարումը, որի մեջ մտնում են տարրեր բնական և ոչ բնական աղետների ժամանակ իրականացված հատակագծման, կանխատեսման, կոռորդինացման, վերլուծության, ժամանակավոր բնակության և վերակառուցման միջոցառումները:

Ճգնաժամային իրավիճակների կառավարումը կարելի է բաժանել երեք փուլ՝ նախաճգնաժամային, ճգնաժամային և հետճգնաժամային: Այն աշխատանքները, որոնք տարբում են աղետների կանխարգելման կամ նրանց պատճառած վնասների նվազեցման ուղղությամբ, գտնվում են քաղաքաշինության, քաղաքի զարգացման նախագծերի կազմնան աշխատանքների կենտրոնում: Զարգացած երկրներում այս ուղղությամբ մեծ աշխատանք է կատարված, մինչեւ Իրանում քաղաքի զարգացման ծրագրերի մշակման և քաղաքաշինության գործընթացներում սահմանված կանոնները և սկզբունքները դեռևս ամբողջություն չեն կիրառվում:

Հետազոտության մեթոդիկան: Ներկայունս կանխարգելման նպատակով տարբող աշխատանքները ճգնաժամային իրավիճակների կառավարման գործընթացում շատ կարևոր տեղ են զբաղեցնում: Այս նպատակով ամենաարդյունավետ միջոցներից է համարվում քաղաքի զարգացման ծրագրերում նախագծման կանոնների կիրառումը, որոնցից են բնակության և աշխատանքային վայրերի տարածքային հիմնավորված քաժանումը, աղետների ժամանակ անվտանգ վայրերի համար տարածքի ընտրությունը, շենքերի բարձրության և մայթերի լայնքի միջև համապատասխանությունը և այլն:

Բնական աղետներն Իրանի և ընդհանրապես ամբողջ աշխարհի կարևորագույն հիմնախնդիրներից են: Քանի որ դրանք անսպասելի են լինում, արագ և ճիշտ որոշումներ կայացնելու նախագծերն իրականացնելու նպատակով ստեղծվել է ճգնաժամային իրավիճակների կառավարման ծրագիր: ճգնաժամային իրավի-

ճակների կառավարումը նախադետային, աղետների, հետադետային ժամանակաշրջաններում պահանջում է իրականացնել բազմաբնույթ աշխատամքներ՝ աղետների ազդեցությունը նվազեցնելու նպատակով: Քաղաքի ճիշտ հատակագծման, այսինքն՝ փողոցների, շինությունների, աշխատատեղերի, հանգստյան վայրերի տարածական-կառուցվածքային և գործառությային գործոնների պահպանան դեպքում բնական աղետների հետևանքները կարող են էապես նվազել:

Բնական աղետներն ունենում են բազմաթիվ հետևանքներ, որոնցից են՝
ա) ֆինանսական ու նյութական վճասներ և կորուստներ (շինությունների և սարքավորումների ավերածություններ); բ) մարդկային վճասներ և կորուստներ (մահացածներ, վիրավորներ, կորածներ, հաշմանդամներ); գ) սոցիալական և հոգեբանական վճասներ (հարազատների կորուստ):

Ծգնաժամային իրավիճակները մեծ ազդեցություն են բողնում երկրի զարգացման վրա, քանի որ դրանց պատճառած վճասները կանգնեցնում կամ դանդաղեցնում են երկրի տնտեսության զարգացման ընթացքը: Այս ուղղությամբ առաջացած վճասները բաժանվում են հետևյալ խմբերի. ա) բնական ռեսուրսներին պատճառված վճասներ; բ) ֆինանսական վճասներ; գ) տնտեսության թուլացում; դ) զարգացման ծրագրերի դանդաղեցում և ռեսուրսների ուղղորդում դեպի վերակառուցման և բարելավման աշխատանքները:

Մի շաբաթ միջոցառումների շնորհիվ կարելի է նվազեցնել վճասները: Դրանցից են՝ ա) քաղաքի հենքային կառուցվածքի ամրապնդումը; բ) առաջատար տեխնոլոգիաների և բարձրորակ շինանյութերի կիրառումը; գ) ծգնաժամային իրավիճակների կառավարման բարելավումը; դ) բնապահպանական ծրագրերի իրականացումը:

Ծգնաժամային իրավիճակների կառավարման սկզբունքների և ծրագրի մշակման համար հարկավոր է նկատի առնել հետևյալ հանգամանքները:
1) ծգնաժամային իրավիճակների դասակարգումը և տեսակների առանձնացումը;
2) ճգնաժամային իրավիճակների դասակարգումն ըստ վտանգի մեծության;
3) ճգնաժամային իրավիճակների կազմը տարբեր պայմանների հետ;
4) ճգնաժամային իրավիճակներում արագ արձագանքման ռազմավարության մշակումը; 5) կառավարման խմբերի կազմակերպումը; 6) ռեսուրսների օգտագործումը; 7) ճգնաժամային իրավիճակների կառավարման ծրագրի մշակումը;
8) ճգնաժամային իրավիճակներում պայքարի ձևերը;
9) ճգնաժամային իրավիճակներում պայքարի ձևերը:

Ծգնաժամային իրավիճակների կառավարման անհրաժեշտ պայմաններն են՝ ցանցային կապի ստեղծումը, տվյալ իրավիճակի վերաբերյալ տեղեկատվություն հավաքումն ու փրկարարական աշխատանքների համար հաշվարկների կատարումը: Ավերածությունները կարող են լինել տեղական մաշտարով, օրինակ՝ ջրհեղեղի դեպքում, կամ տարածաշրջանային մաշտարով՝ երկրաշարժի և հրաբուխի դեպքերում:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման շնորհիվ ճգնաժամային իրավիճակների կառավարման գործընթացը մեծ առաջընթաց է ունեցել: Ավելացել է կայացվող որոշումների ճշգրտությունը, տեղեկատվության համապատասխանեցումը ստանդարտներին և տեղեկատվության արագ փոխանակումը փրկարարական աշխատանքների կառավարիչների միջև: Այս աշխատանքների հետևանքով էապես նվազում է տուժածների քանակը, իսկ ճգնաժամային իրավիճակների կառավարումը դառնում՝ ավելի արդյունավետ: Իրանում ճգնաժամերի կառավարումը համակարգված չէ, քանի որ տեղեկատվական տեխնոլոգիաների սահմանափակ կիրառության պատճառով դժվարանում է տարբեր ժամանակներին վերաբերդ տվյալների համադրումը:

Տեղեկատվության ստացման դեպքում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետևյալ գործոններին և ցուցանիշներին. 1) տարածքի աշխարհագրական դիրքը; 2) վճառված տարածքների մակերեսները, վճառների չափերն ըստ տեսակների (մարդկային, քաղաքաշինական, մշակութային, տնտեսական, և այլն); 3) դեպքի դեպքի վայր տանող հիմնական, կողմնակի, ցամաքային, օդային և ջրային ճանապարհների բնույթն ու որակը; 4) փրկարարական ուժերի թվաքանակի և դիրքի պարզումը տարածքում; 5) հիվանդանոցների ազատ տևերի քանակը; 6) համաճարակների տարածման դեմ սանհտարական շտավ աշխատանքների կազմակերպումը; 7) մարդկային ներուժի, փրկարարական ջոկատների և տեխնիկական միջոցների օգտագործման մասշտաբները; 8) քաղաքների, գյուղների և բաղամասերի բնակչության թվաքանակները; 9) բնակության տարածքների քարտեզների պատրաստումը; 10) կլիմայի հետ կապված կանխատեսումները; 11) բնակչության առաջին անհրաժեշտության մթերքների և ռեսուրսների պարզումը (ջուր, ուտելիք, հագուստ, վրան և այլն); 12) սուժածների համար ժամանակավոր բնակության վայրերի ընտրությունը:

Հավաստի և ճշգրիտ նախնական տեղեկությունների արագ տիրապետումը ճգնաժամային իրավիճակներից անմիջապես հետո նպաստում է տվյալ իրավիճակի վերաբերյալ ճշշտ որոշումներ կայացնելուն: Ժամանակավոր բնակություն հաստատելու հետ կապված աշխատանքների արագացման նպատակով հարկավոր է ուսումնասիրել քաղաքի տվյալ թաղամասի տարածքը, ինչպես նաև տալ տարածքի ճանապարհների, ջրամատակարարման և կոյուղու խողովակների ցանցի բնույթը և այլն: Ծգնաժամային իրավիճակներում ժամանակավոր բնակության հաստատման նպատակով կարող են օգտագործվել այգիները և այլ հանգստյան գրտիները: Եթե նշված տարածքները կառուցապատվում են ըստ ստանդարտների, հարկավոր չի լինում դիմել ծառերի հատմանը, կառույցների ավերմանը կամ սարքավորումների տեղաշարժմանը:

Ծգնաժամային իրավիճակներում ժամանակավոր բնակության համար օգտագործում են նաև հոգեւոր կենտրոնները, ինչպիսիք են՝ մզկիթները, եկեղեցները և այլն, որոնք տվյալ իրավիճակներում հոգեկան անդորր են ապահովում: Իրանի Բամե և Մենջիլե քաղաքների երկրաշրջերի հետադեսային փուլի վերլուծությունը ցույց է տվել, որ ժամանակավոր բնակության վայրերի ապահովման հարցում սխալ որոշման հետևանքով, աղետի վայր օգնութան ժամանած մեծաքանակ ուժը, օգնության փոխարեն, ավելորդ հոգս էր դարձել, քանի որ տվյալ աղետի հետևանքով առաջացած ծգնաժամային իրավիճակի կառավարման հարցը կոորդինացված և կազմակերպված չէր:

Հետադեսային վճառները: Զրատար և գազատար խողովակների, ելեկտրահաղորդման ու հեռախոսակապի գծերին պատճառած վճառները կարող են հետադեսային մեծ վտանգ ստեղծել: Օրինակ՝ երկրաշրջի հետևանքով կարող է վճառվել զագի խողովակը, ինչի հետևանքով զագր կարող է տարածվել և ահենի հրդեհի պատճառ դառնալ (ինչպես տեղի ունեցավ 1995թ. Կորե և Սան-Ֆրանցիսկո քաղաքների դեպքերում): Զրի մատակարարման բոլոր սարքավորումները՝ ջրի խողովակները, ջրհորները, պոմպային սարքավորումները, ջրամբարները և այլն, պետք է դիմացկուն և անվտանգ լինեն: Շատ կարևոր է խմելու ջրի, ինչպես նաև երկրաշրջի հետո առաջացած հրդեհների մարման համար անհրաժեշտ ջրի ապահովումը:

Հետադեսային փուլի աշխարհագրական կարևոր հիմնախնդիրներից է տարածքների օպտիմալ օգտագործման ուղիների պարզումը, որը կնպաստի աղետի պատճառած վճառների նվազեցմանը: Այն դեպքում, եթե տարածքային բաժանումը կատարվում է հիմնավորված ու կոորդինացված կերպով և ստանդարտներին համաձայն, կարելի է հեշտությամբ դատարկել տվյալ վայրը

բնակչությունից և կանխարգելել հետադետային դեպքերը: Անհրաժեշտ է ճիշտ և հիմնավորված կերպով առանձնացնել այն տարածքները, որոնք օգտագործվում են հատուկ շինությունների, մասնավորապես՝ հիվանդանոցների, վառելիքի պահեստների, հրշեց ծառայության տեղաբաշխման վայրերի համար, որոնք կոչվում են հատուկ օգտագործման տարածքներ:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ ավերածությունների չափսերի և տուժածների քանակի վրա առավել մեծ չափով ազդում են հետևյալ գործոնները՝
ա) տվյալ տարածքի (բնակչության բնակչության քանակը; բ) տարածքի թեքությունների աստիճանը; գ) օգտագործվող շինանյութերի տեսակը; դ) բնակչության թվաքանակը շենքերում; ե) շենքերի տարիքը տվյալ տարածքում; զ) շենքերի հարկայնությունը ու բարձրությունը:

Քաղաքաշինության հիմնական նպատակներից մեկը դեպքերի և իրադարձությունների կանխարգելումն է վտանգավոր գործոնների կանխատեսման և անվտանգության պահպանման միջոցով: Քաղաքներում բնակչության և տարածական արագ աճը մեծացնում է աղետների պատճառած վնասների ներուժը: Մի կողմից, անվտանգության նախնական կանոնների անտեսումը քաղաքաշինության մեջ, և մյուս կողմից, քաղաքի աճի ոչ ճիշտ ծրագրավորումը, հարմար նախապայմաններ են աղետների պատճառած վնասների ավելացման համար: Մինչդեռ, ճգնաժամային իրավիճակների կառավարումը բնական աղետների ժամանակ կարող է զգալի չափով նվազեցնել պատճառած վնասների չափը:

Եզրակացություն: Իրենց բնույթով քաղաքաշինական և աշխարհագրական այնպիսի հատկանիշներ և գործոններ, ինչպիսիք են՝ քաղաքի աշխարհագրական դիրքը, կառուցապատման խտությունը և հարկայնությունը, գործառությունների գոտիների տեղադիրքը և տարածքը, բնակչության թիվն ու խտությունը, ճանապարհների, էլեկտրահաղորդման գծերի, ջրմուղների և գազամուղների ցանցերի դիրքն, երկարությունը և գծագրությունը, որոշակի ազդեցություն են թողնում աղետների հետևանքով պատճառված վնասների մասշտարների վրա, մեծացնելով կամ փոքրացնելով դրանք: Քաղաքի տարածքային կառուցվածքի վորոխնական և հավասարակշռված լինելու հատկությունը, քաղաքի բնակչության ճիշտ և համաչափ տեղաբաշխումը, արդյունավետ և այլնտրանքային տրանսպորտային ցանցի ձևավորումը, էլեկտրաէներգիայի, ջրի, գազի մատակարարման ժամանակակից և ապահով ցանցի ձևավորումը և քաղաքի հստակ և ճկուն հատակագիծը քաղաքաշինական այն գործոններն են, որոնք մեծ ազդեցություն ունեն աղետների ավելիչ վնասների մասշտարների վրա: Աղետների հետևանքների դեպքում քաղաքները պետք է զինված լինեն անհրաժեշտ փրկարարական սարքավորումներով, իսկ երկրաշարժերի հետևանքների նվազեցման համար կարևոր է ամբողջ հասարակության տեղեկացվածությունը և պատրաստականությանը:

Ստացվել է 21.02.2013

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Մանասյան Մ.Գ.** Հասարակական աշխարհագրական հետազոտությամ մեթոդները: Եր., ԵՊՀ հրատ., 2008, 260 էջ:
2. **Պերցիկ Է.Н.** Города мира. М., 1999, 384 с.
3. Районная планировка. Справочник проектировщика. М., 1986, 325 с.

М. Г. МАНАСЯН, М. САНИ

ГРАДОСТРОИТЕЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ УПРАВЛЕНИЯ В КРУПНЫХ
ГОРОДАХ ИРАНА В КРИЗИСНЫХ СИТУАЦИЯХ

Резюме

В работе рассмотрены градостроительные проблемы управления кризисными ситуациями, возникающими вследствие природных бедствий, в частности землетрясений. Выявлены основные географические и градостроительные факторы, влияющие на масштабы последствий природных бедствий. Предложены мероприятия, направленные на улучшение градостроительного управления в условиях кризисной ситуации, которые по-возможности могут уменьшить последствия природных бедствий.

M. G. MANASYAN, M. SANI

PROBLEMS OF URBAN-CONSTRUCTIONAL MANAGEMENT
IN CITIES OF IRAN IN CRISIS SITUATIONS

Summary

In the article the main urban-constructional problems of crisis situations being emerged as a result of natural disasters (particularly earthquakes) are being examined. The main geographical and urban-constructional factors affecting on scales of results of natural disasters are revealed. Activities directed to improvement of urban-constructional management in crisis situations have been proposed. These may mitigate the results of natural disasters.